
**ՆԱՍԻՐ-ԽՈՍՐՈՎԻ «ՍԱՖԱՐ–ՆԱՄԵՆ» ՈՐՊԵՍ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ՊԱՐՄԻՑ ՄԵՄՈՒԱՐԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆ**

ԱՐՄԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

XIX դարում պարսից գրականության պատմությունը հատկանշվում է զարգացման նոր միտումներով, որոնք առանձնապես ակնառու էին արձակի բնագավառում: Դրանցից ամենանշանավորը վեպի ժանրի սկզբնավորումն է, ինչպես նաև հնավանդ հուշագրական (մեմուարային) գրականության վերադարձը: Եթե սրան ավելացնենք թատերգության առաջին քայլերի առկայությունը, ապա տեսանելի կդառնա այդ միտումների ընդգրկունությունը: Սակայն հարկ է նկատել, որ նշված միտումներն առավել աշխույժ և արգասավոր էին դրսևորվում հուշագրական ժանրատեսակներում: Դա պայմանավորված էր երկու էական՝ Պարսկաստանի միջազգային տնտեսական կապերի (մասնավորապես եվրոպական երկրների հետ) աննախադեպ ընդլայնմամբ և հուշագրական գրականության ավանդույթի գործոններով: Իսկ այդ ավանդույթը սկզբնադրվել էր դեռևս XI դ. նշանավոր բանաստեղծ և մտածող Նասիր-խոսրովի կողմից:

Աբու Մուլին Նասիր իբն Խոսրով Ղոբադիանի Սարվազին ծնվել է 1004 թ. Ղոբադիան քաղաքում (ներկայիս Տաջիկստանի տարածք): Նասիրի ընտանիքը սերում էր տեղի հին իրանական ազնվականությունից: Դպրոցում ձեռք բերած բազմակողմանի գիտելիքները նրան հնարավորություն են տալիս արդեն երիտասարդ տարիքում մեկնել Բալխ և ծառայության անցնել Ղազնավյանների արքունիքում, իսկ ավելի ուշ՝ 1040 թ., Մերվում՝ Խորասանի սելջուկյան կառավարչի մոտ: Ֆինանսական տեսչի պաշտոնի բերումով նա մոտիկից տեղյակ էր տուրքերի ու հարկերի տակ կքած գյուղացիների և քաղաքի բնակիչների ծանր վիճակին: Բանաստեղծի զգայուն սրտով մտածողը չէր կարող չտարվել այդ իրավիճակից ելք գտնելու որոնումներով: Ծանոթանալով դեռևս VIII դարում Իրաքում սկզբնավորված քարնատական շարժման գաղափարներին՝ նա դառնում է դրանց հետևորդը: Սոցիալական հավասարության իդեալից ակունքված քարնատականությունը հետագայում ներկալվեց իսլամի շիա ուղղության շուրջ կազմավորված իսմայիլիստական շարժման գաղափարախոսության մեջ: Սակայն, ակադեմիկոս Ի. Ս. Բրագինսկու կարծիքով, Նասիր-խոսրովի «որոնումներն ու մոլորումները առնչվում են «ֆաթեմիական փուլի» քարնատականությանը»¹: Տեղեկանալով, որ Եգիպտոսում կյանքի են կոչված իր փայփայած և դավանած գաղափարները, նա պաշտոնաթող է լինում և մեկնում սրբախորհուրդ իր երազում հայտնված ծերունու ցույց տված ուղղությամբ՝ դեպի Մեքքա:

¹ Брагинский И. С. Из истории персидской и таджикской литературы. М., 1972, с. 308.

Այդ ճանապարհորդության ժամանակ (1045-1052 թթ.) Նասիր-խոսրովը եղել է Ատրպատականում, Հայաստանում, Սիրիայում, Պաղեստինում, Իրաքում: Ֆաթեմյանների կառավարած Եգիպտոսում նա ապրել է մոտ երկու տարի, այդ ընթացքում չորս անգամ ուխտի գնացել Մեքքա: Շրջագայության ժամանակ ականատես լինելով գյուղացիների ու աշխատավորների չարքաշ վիճակին և սեփական հայրենիքում այդ խավի դրությամբ լավատեղյակ՝ Նասիր-խոսրովը եզրակացնում է, որ «իր եղած երկրներից միայն շիա Ֆաթեմյանների իշխանության տակ գտնվող Եգիպտոսում է իշխում կարգ ու կանոն, հանգստություն, օրենքի գերակայություն, ապահովություն, որոնց մասին քաղցած պարսիկներին մնում էր միայն երազել»²:

Մտերմանալով Եգիպտոսի Ֆաթեմյան կառավարիչներից մեկի՝ ալ-Մուսթանսիր բի-լ-լլահի (1035-1094 թթ.) հետ՝ ստանում է իսմայիլական գաղափարախոսությունը իր հայրենի Խորասանում տարածելու իրավունք ու հանձնարարություն և, վերադառնալով Բալխ, եռանդով տրվում է այդ գործին: Քարոզչությունների սոցիալական-քաղաքական և կրոնական (շիական) հնչողությունը շուտով հարուցում է սելջուկ սուննի կառավարիչների սուր դժգոհությունը, որոնց հալածանքներից խուսափելու համար նա հեռանում է Մազանդարան, բայց այստեղ էլ զգալով վերահաս ճնշումների վտանգը՝ հեռանում է դեպի Պամիրյան նախալեռներ և, չդադարեցնելով քարոզչական գործունեությունը, իր վերջին տարիներն անցկացնում Բադախշանի շրջանի Յոմզան դաշտավայրում: Այստեղ են ստեղծվել այն աշխատությունները, որոնք հետագայում նրան պիտի դարձնեին պարսից գրականության ամենահայտնի և մեծարված անուններից մեկը:

Նասիր-խոսրովի անունով ավանդված են մեծ թվով ստեղծագործություններ, որոնցից մի քանիսի պատկանելությունը նրա գրչին երկբայելի է: Անխաթար չեն հասել նաև անվիճարկելի նրանը համարվող երկերից մի քանիսը: Խոսքը միայն գրիչների անփութությամբ կամ անհիմնացությունից առաջացած հավելագրումների կամ բացթողումների մասին չէ, այլ կրոնաքաղաքական նկատառումներով կատարված մեծ թվով փոփոխություններին է վերաբերում: Նրա չափածո գործերից ամենանշանավորը բանաստեղծությունների դիվանն է, ինչպես նաև «Ռուշենայի-նամե» («Լուսավորության գիրք») և «Սաադաթ-նամե» («Երջանկության գիրք»)՝ պոեմները: Տեղեկություն կա նրա արաբերեն դիվանի մասին, որը չի պահպանվել:

Արձակ ստեղծագործություններից հայտնի են փիլիսոփայական հարցերին վերաբերող «Ձադ-ալ-մոսաֆերին» («ճամփորդների պաշարը»), որը ցուցադրում է նրա փայլուն գիտելիքները այդ գիտության ասպարեզում: Նրա մյուս գրքի վերնագիրը «Վաջի-է դինն» է («Հավատքի պատկերը»), որն ամբողջությամբ վերաբերում է իսմայիլական գաղափարախոսության հիմունքներին: Նասիր-խոսրովի ստեղծագործություն-

² **Насир-и Хусрау.** Книга путешествий. Сафар-Намэ. М., 1933, с. 15.

³ «Սաադաթ-նամեի» Նասիր-խոսրովի գրչին պատկանելը որոշ ուսումնասիրողներ չեն ընդունում:

ների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում «Սաֆար-նամեն» թե՛ որպես վաղ շրջանի պարսկական արձակի նմուշ և թե՛ որպես մեմուարային գրականության առաջին հուշարձան:

Եվրոպան Նասիր-խոսրովի ստեղծագործություններին ծանոթացավ ու սկսեց ուսումնասիրել XIX դարի 80-ական թվականներին, երբ գերմանացի հայտնի արևելագետ Յ. Էթեն հրատարակեց այդ ստեղծագործություններից մի քանիսը և դրանց վերաբերյալ գրեց մի մեմուարություն: Այդ ժամանակին է վերաբերում նաև ֆրանսիացի արևելագետ Շեֆերի թարգմանած «Սաֆար-նամեի» հրատարակությունը, որի աշխատանքներին մեծապես աջակցել է ռուս արևելագետ Վ. Ա. Ժուկովսկին⁴: Այնուհետև 1928 թ. Թեհրանում լույս է ընծայվում նրա բանաստեղծությունների ժողովածուն Յ. Թադի-Չադեի խմբագրությամբ և նախաբանով, որը առավելապես ճշգրտում է կենսագրական բնույթի փաստեր:

1933 թ. լույս է տեսնում «Սաֆար-նամեի» ամբողջական տեքստի՝ Ե. Է. Բերտելսի ռուսերեն թարգմանությունը: Եվ ինչպես նշում է ինքը՝ Ե. Է. Բերտելսը, «այդ թարգմանությունը հասանելի կդարձնի «Սաֆար-նամեն» ընթերցողների լայն շրջանակներին և հնարավորություն կտա նախապատրաստական աշխատանքներից վերջապես անցնել իրական գիտական հետազոտությունների»⁵:

Բոլոր հետազոտողները նշում են, որ «Սաֆար-նամեի» մեզ հասած տարբերակը ժամանակի ընթացքում ենթարկվել է սուլունի անհայտ խմբագրի ուղղումներին ու փոփոխություններին, որի մասին վկայում է այն փաստը, որ Նասիր-խոսրովից հետո ստեղծագործած սուլունի հեղինակներից շատերի գրվածքներում մեջբերումներ կան «Սաֆար-նամեից», որոնք մեզ հասած տարբերակում բացակայում են: 1933 թ. հրատարակության նախաբանում Ե. Է. Բերտելսը այն կարծիքն է հայտնում, որ, ըստ երևույթին, խմբագիրը, նշակելով գիրքը, որպես օրինակ օգտագործել է «Ձիարաթ-նամեի»՝ սրբավայրերի ուղեցույցի ժանրածևր, որը այդ ժամանակաշրջանի պարսկական գրականության մեջ մեծ տարածում ուներ⁶: Սակայն 1960 թ. «Պարսկական և տաջիկական գրականության պատմության» մեջ անդրադառնալով հուշարձանի տեքստում կատարված միջամտությունների խնդրին՝ նա այն կարծիքն է հայտնում, որ, հնարավոր է, այդ ստեղծագործության հանդեպ իսմայիլականները կիրառել են քիթման կամ թաքիա հնարքը, այսինքն՝ «Ձիարաթ-նամեի» ձևին նմանեցումը եղել է միտումնավոր, երկի իսմայիլական ուղղվածությունը քողարկելու ու սուլունի ձևանալու համար⁷: Սակայն, փոփոխված տարբերակով էլ այս ստեղծագործությունը մեծապես արժեքավոր է Իրանի գրականության, մասնավորապես վերջինիս մեմուարային ժանրերի ուսումնասիրության, XIX դարում դրանց աննախադեպ զարգացումներում ավանդական ու նորը տարրոշելու համար:

⁴ Տե՛ս **Насир-и Хусрай**, նշվ. աշխ., էջ 7:

⁵ Նույն տեղում, էջ 9:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 21-22:

⁷ Տե՛ս **Бертельс Е. Э.** История персидско-таджикской литературы. М., 1960, էջ 492:

«Սաֆար-նամեն» (սաֆար՝ պրս. «ճամփորդություն», նամեն՝ «գիրք, գրվածք») իր կառուցվածքով և բնույթով մենուարային գրականության այն ժանրերից է, որի միտվածքն իսկ (ճանապարհի ընթացքում տեսածը, զգացածը, տպավորությունները գրառելը) ենթադրում է ստեղծագործության ժամանակային և տարածական սահմանների ընդգրկունություն, հեղինակային «ես-ի» ավելի անսքող, համակողմանի ներկայություն: Նրա մտքի շարժումը յուրօրինակ զուգահեռագիծ է հեղինակի տեղաշարժին: Ն. Չերնիշևսկին, բնութագրելով ճամփորդական օրագրի ժանրային առանձնահատկությունները, գրում էր. «Միացնելով իր մեջ պատմության, վիճակագրության, պետականագիտության, բնագիտության և այլ գիտությունների տարրեր և իր ձևով մոտենալով, այսպես կոչված, թեթև գրականությանը, որպես պատմություն անհատի սեփական արկածների, զգացմունքների և մտքերի մասին, ճամփորդական օրագիրը ամենաթեթև ձևին զուգակցում է ամենահարուստ և գրավիչ բովանդակություն»⁸:

Ինչպես նշվեց, Նասիր-խոսրովի ճանապարհորդության նպատակը քարմատական շարժման գաղափարներին ծանոթանալն էր, որը լավագույնս կարելի էր իրականացնել այդ շարժման գաղափարներով կառավարվող Եգիպտոսում: Իր ստեղծագործության մեջ նա նշում է, որ մեկնելու պատճառը իր տեսած երազն էր:

شبی در خواب دیدم که یکی مرا گفتی: "چند خواهی خوردن از این شراب که خرد از مردم زایل کند، اگر بیهوشی باشی بهتر." من جواب گفتم که: "حکما جز این چیزی نتوانستند ساخت که اندوه دنیا کم کند." جواب دادی: "در بیخودی و بیهوشی راحتی نباشد، حکیم نتوان گفت کسی را که مردم را به بیهوشی رهنمون باشد، بلکه چیزی باید طلبید که خرد و هوش را بیفزاید." گفتم که: "من این از کجا آرم؟" گفت: "جوینده یابنده باشد" و پس سوی قبله اشارت کرد و دیگر سخن نگفت.⁹

(«Մի գիշեր երազում տեսա, որ մեկն ինձ ասաց. «Ինչքան պիտի խմես այդ գինին, որը մարդուց խլում է խելքը: Ավելի լավ է սթափ լինես»: Ես պատասխան տվի, թե՛ «Իմաստունները, բացի դրանից այլ բան չկարողացան հնարել, որն աշխարհի տրտմությունը պակասեցնի»: Պատասխանեց. «Ինքնամոռացման ու անզգայության մեջ հանգստություն չի լինի: Իմաստունը չի կարող մարդուն ասել, որ մարդկությանը դեպի անզգայություն տանի: Ընդհակառակը, պետք է փնտրել այնպիսի մի բան, որ կավելացնի միտքն ու սթափությունը»: Ասացի. «Ես դա որտեղի՞ց գտնեմ»: Ասաց. «Փնտրողը կգտնի» և ապա Ղիբլայի կողմը ցույց տվեց ու այլ ոչինչ չասաց»):

Երազի հնարքը հեղինակին հնարավորություն է տվել, պահպանելով ճամփորդության նպատակը նշելու կանոնը, քողարկելու այն հանգամանքները, որոնք նա հարկադրված էր թաքցնել: Կարելի է ասել, որ նրան դա հաջողվել է, այն էլ՝ միստիկ, ժամանակի հոգուն միանգամայն համահունչ խոսքով, որի վկայությունն է այս ստեղծագործությունը հետազոտողների հայտնած տարակուսանքը՝ ի՞նչ էր փնտրում հեղինակը:

⁸ Чернышевский Н. Г. Собрание сочинений в 15-ти томах. Т. 4. М., 1948, с. 222.

⁹ راه آورد سفر "گزیده سفر نامه ناصر خسرو، تصحیح و توضیح: دکتر محمد دبیر سیاقی، ت. 1992/1370، էջ 2 Այսուհետև այս հրատարակությունից բերված քաղվածքների էջը կնշվի շարադրանքում, փակագծերի մեջ:

Ուսումնասիրողներից շատերը Նասիր-խոսրովին անվանել են «Ճշմարտություն որոնող»:

Ամբողջ ստեղծագործությունը գրված է արձակով, շատ պարզ ու անպաճույճ լեզվով և, ըստ երևույթին, նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար: Միայն վերջում հեղինակը բերում է երեք բեթ մարդու անգոյությունից այս աշխարհի և հակառակը ճամփորդելու մասին: Նախադասությունները մեծ մասամբ սեղմ են, առանց այդ ժամանակաշրջանի գրականությանը բնորոշ բարդ համեմատությունների ու այլաբանությունների: Օրինակ՝

قاین شهری بزرگ و حصین است .گرد شهرستان خندقی دارد .ومسجدی آدینه به شهرستان اندر

است (էջ 111)

(«Ղայենը մեծ ու ամրացված քաղաք է: Քաղաքի շուրջբոլորը փոսկա: Մզկիթը քաղաքի կենտրոնում է»):

Հեղինակը անմիջականորեն պատմում է այն ամենի մասին, ինչ տեսել է՝ ձգտելով հնարավորինս ճշգրիտ լինել: Ակներև է, որ նկարագրությունների այս անմիջականությունը հնարավոր է եղել պահպանել շնորհիվ ճամփորդական օրագրում կատարած նշումների, որտեղ Նասիր-խոսրովը գրի է առել իր բոլոր տպավորություններն ու դիտարկումները, որոնք երկին հաղորդել են գրավչություն, խոսքը՝ դարձրել տպավորիչ:

Նասիր-խոսրովի ստեղծագործության բոլոր ուսումնասիրողները հատուկ նշում են նրա ճշմարտախոսությունը, անկեղծությունը և նկարագրությունների ճշգրտությունը: Հեղինակի խոսքերով, նա իր ստեղծագործության մեջ գրի է առել միայն «Ճշմարտությունը, եթե անգամ այն իրեն վարկաբեկում է» (էջ 1): Ավելին, իր ասածի արժանահավատությունը փաստելու համար նա նշում է այդ տեղեկատվության աղբյուրը: Օրինակ՝ նկարագրելով Կահիրեի շուկան՝ նա գրում է, որ այստեղ կարելի է միանգամից գնել տարվա բոլոր եղանակների մրգեր ու պտուղներ, և ապա նշում.

فاما مرا در این غرضی نبوده و نوشتم الا آنچه دیدم . و بعضی که شنیدم و نوشتم عهده آن بر

من نیست.(էջ 60)

(«Ինձ երևի չեն հավատա, բայց ես ստելու ոչ մի պատճառ չունեմ և գրում եմ միայն այն մասին, ինչ տեսել եմ: Իսկ եթե ես գրել եմ այն բանի մասին, ինչ լսել եմ, ապա դրա համար ես չեմ կարող պատասխան տալ...»):

Հեղինակի այսպիսի հոգածությունը ևս վկայում է «Սաֆար-նամեն» գրելու քարոզչական նպատակի մասին. փաստերի ու իրողությունների հավաստիության նկատմամբ ընթերցողի հավատով էր հնարավոր հասնել քարոզվող գաղափարների ազդեցության և ընդունման: Իսկ նա դրանք իր ունկնդրին մատուցում է ոչ թե հեղինակային «բաց» խոսքով, այլ տեսած իրողությունները համադրելու միջոցով: Այսպես, Ֆաթեմիդների պետության առավելությունները ցուցադրելու նպատակով նշվում է, որ երբ Նեղոսը ծանծաղում է ու երաշտ է սպասվում, պետությունը հպատակներին ազատում է հարկերից (էջ 46), կամ Կահիրեում ոստիկանությունն այնպես է աշխատում, որ վաճառականները տուն գնալիս խառնուրդների դրները չեն փակում (էջ 64) և այլն:

Նասիր-խոսրովի սուր դիտողականությունը ակնհայտ է թե՛ նկարագրական, թե՛ պատմողական տեքստերում: Այսպես, քաղաքների, գյուղերի, մզկիթների ու շուկաների նկարագրություններում նա բերում է ստույգ, ճշգրտած տվյալներ դրանց ընդգրկած տարածքների, չափերի մասին: Այսպիսին են, օրինակ, սրբավայրերի՝ Սախրա քարի (էջ 25), Յիսուսի ծննդավայրի (էջ 28) նկարագրությունները և այլն: Նկարագրական տեքստերին զուգահեռ և նրանց հետ միահյուսված՝ հանդես են գալիս պատմողական տեքստերը: Դրանք գրառումներն են հեղինակի հետ կատարված դեպքերի մասին: Սակայն միշտ չէ, որ այդ տեքստերում նկարագրվում են հեղինակի հետ կատարված իրադարձությունները: Օրինակ՝ պատմողական տեքստերի վառ օրինակ են Նեղոսի ջրանցքի բացման ու սուլթանին դիմավորելու արարողության, սպանված հրեա վաճառականի մասին պատմությունները: Բանագետները մինչ այսօր էլ մեծ ուշադրություն են դարձնում Լեյլի ու Մաջնունի մասին նրա գրառած ավանդազրույցներին (էջ 92), ընկնավոր կանանց կղզու (էջ 45) մասին պատումին և այլն:

Շատ ավելի զորեղ է Նասիր-խոսրովի գրիչը նկարագրությունների պարագայում: Առարկաների վերաբերյալ ընթերցողի պատկերացումը նա մեկ ամբողջացնում ու ընդհանրացնում է դրանց զգայական ընկալման միջոցով, մեկ՝ մասնատում ու տրոհում մասնիկների՝ դրանց նյութն ու ատաղձը ճշգրտելով: Օրինակ՝

چون آفتاب بر آنجا افتد شعاع آن چنان باشد که عقل در آن متحیر شود . (էջ 26)

(«Երբ արևի [շողը] վրան ընկնի, դրա փայլն այնպիսին լինի, որ [տեսնողի] խելքը գնա»):

در زها به آرزیز گرفته، چنانکه از آن محکتر نتواند بود. (էջ 29)

(«Միացման տեղերը արճապատված են այնպես, որ դրանից ամուրը չի կարող լինել»):

آن درها یکی برنجی است بیش از حد به تکلف و نیکو ساخته اند، چنانکه گویی زرین است. (էջ 29)

(«Այն դռները ամբողջովին բրոնզից են, չափից ավելի արվեստորեն և այնքան լավ պատրաստված, որ ասես ոսկուց լինեն»):

Յետաքրքիր են հեղինակի կողմից տարբեր անհատներին տրված բնութագրումները. դրանք հակիրճ են և գերազանցապես վերաբերում են անձի անհատականությանը, վարքին, ոգեղեն էությանը: Այդ բնութագրումները պատկերացում են տալիս նաև Նասիր-խոսրով գրողի մարդընկալման մասին: Ալի էբն Ահմադ անձնավորությունը նախ ներկայացվում է որպես հաջ կատարած, ճշմարիտ հավատացյալ, ապա միայն նշվում է նրա ունևոր լինելը (էջ 97): Մի այլ դեպքում անհատի «զարգացած» (فاضل) ու «կարդացած» (ادیب) լինելու հետ մեկտեղ շեշտվում է նրա «համեստ» (متواضع) լինելը (էջ 101): Օրինակ՝

علی بن احمد، مردی ماسلمان و حاجی بود و متمول.

(«Ալի բոն Ահմադը մահմեդական և հաջի էր ու հարուստ»):

مردی اهل و ادیب و فاضل و نیکومنظر و متواضع دیدم و متدین و خوش سخن .

(«Պարկեշտ, կրթված, գրագետ, համեստ, լավ տեսք ունեցող և կրոնապաշտ ու քաղցրալեզու մարդ տեսա»):

Նասիր-խոսրովը «Սաֆար-նամեում» ևս մեկ շատ կարևոր նորույթ էր բերում ժամանակի պարսկական արձակ՝ խոսակցական լեզվի տարրեր

ու արտահայտություններ, որոնք հատկապես առատ են երկխոսություններում: Դրանք երկի պատումը դարձնում էին աշխույժ և կենդանի, հնարավորություն տալիս անձանց մասին պատկերացում կազմելու նաև նրանց խոսքի միջոցով:

Այսպիսով, վերն արված դիտարկումները հիմք են տալիս եզրակացնելու, որ Նասիր-խոսրովը «Սաֆար-նամեում» դրսևորել է գեղարվեստական արձակի կանոններին վարպետորեն տիրապետողի հմտություններ: Սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ այդ միջոցներով տպավորիչ, դյուրըմբռնելի դարձած նրա պատումը դարեր շարունակ և մինչև օրս շարքային ընթերցողների ու մասնագետների ուշադրությունը գրավում է տեղեկատվության բազմազանությամբ ու հարստությամբ, որը հավաքվել ու հաղորդվել էր ամենայն բժախնդրությամբ:

این معنی، که تقریر کردم از سر بصیرت گفتم نه چیزی از اراجیف که من نه ماه درمیانہ ایشان بودم، به یک دفعه، نه به تفاریق (էջ 99)

(«Այս ամենը ես հաստատում եմ սեփական փորձից և սուտ բանբասանքներ չեմ տարածում, քանի որ ինն ամիս անընդմեջ այնտեղ եմ եղել»):

Ակնհայտ է, որ նրա բերած ազգագրական և պատմական տեղեկությունները բացակայում են ժամանակի և հետագա պատմական ու աշխարհագրական սկզբնաղբյուրներում, ինչը պատահական չէ, քանզի հեղինակը տեղեկություններ հավաքելիս առաջնորդվել է որոշակի համակարգով, ըստ որի բնութագրում է տվյալ վայրը: Այդ տվյալներում մշտական են աշխարհագրական դիրքի, խմելու և ոռոգման ջրի առկայության կամ բացակայության, դրա կուտակման միջոցների, արհեստների ճյուղերի զարգացածության աստիճանի, շրջապատող անտառների, սարերի, լճերի ու գետերի մասին բավականին մանրամասն ու ստույգ տեղեկությունները: Այդ ցանկը լրացնում են պատմական, ճարտարապետական, ազգագրական և վիճակագրական տվյալներ պետությունների ու շրջանների կլիմայի, դատական, կրթական և մշակութային համակարգերի մասին:

Ամփոփելով ասվածը կարող ենք նշել, որ Նասիր-խոսրովի «Սաֆար-նամեում» մի երկ է, որտեղ միահյուսված են խոսքի տեղեկատվական հենքն ու գեղարվեստական հարուստ խավերեսը, որոնք մեմուարային գրականության բոլոր ժանրերի հիմնասյուներն են:

Արդի հայտնի իրանագետ Սեիդ Մոհամադ Դաբիր Սիադին լույս է ընծայել այս երկի իր նոր հրատարակությունը, որտեղ ներկայացված են հուշարձանի ամբողջական տեքստը, մեկնաբանություններ և հին տերմինների փոքր բառարան և վերտառել է «Ռահավարդ-ե սաֆար» («Շամփորդությունից բերված նվեր»): Նա ընդգծում է «Սաֆար-նամեի» գրական-մշակութային կարևոր նշանակությունը (էջ 29), որը ճիշտ գնահատեց XIX դարում Արևելքով հրապուրված, Արևելքը ճանաչել ձգտող Եվրոպան՝ ուսումնասիրելով և քանիցս հրատարակելով երկը: Իսկ նույն այդ ժամանակ տասնյակ դարերի հեռվից եկած այս ճամփանվերը պարսից գրականության մեջ մեմուարային ժանրի վերընձյուղման սկզբնահորդ դարձավ:

АРМИНЕ МАРТИРОСЯН – "Сафар-наме" Насира Хосрова как памятник средневековой персидской мемуарной литературы. – В статье рассматривается одно из главных произведений великого персидского поэта и мыслителя XI века Абу Муин Насира ибн Хосрова "Сафар-наме" – первый дошедший до нас памятник средневековой персидской словесности, в котором проступают основные признаки жанра "путевых заметок" и намечается традиция мемуарной литературы. Автор рассматривает причины и цели написания произведения, его жанровые и языковые особенности, значение и влияние на формирование персидской мемуарной литературы. Особо подчеркнуто в статье воздействие, которое "Сафар-наме" оказал на упрощение литературного языка. Можно сказать, что "Сафар-наме", в котором богатая фактографическая основа неотъемлема от художественности, является не только историческим, географическим и статистическим источником, но и одним из немногочисленных в средневековой персидской литературе образцов прозаического повествования.

ARMINE MARTIROSYAN – "Safar-Name" by Nasir-Khosrov as a monument of medieval Persian memoir literature. – The paper considers "Safar-Name", one of the main works by the great Persian poet and philosopher of XI century, Abu Muin Nasir ibn Khosrov. "Safar-Name" is the first monument of medieval Persian literature to survive. It reflects main features of "travelling" genre and the traditions of Persian memoir literature.

The paper also considers reasons and goals of writing, genre, and linguistic peculiarities of the composition, meaning, and influence on the process of formation of Persian memoir literature, as well as the adaptation of the language of the composition. "Safar-Name" is not just a historical, geographical and statistic source but also one of the few prosaic works of medieval Persian literature.